սուլի եւ Արարատեանի վերայ, Նշանակելով (նորա որդի) Մրբվանին դատաստանական գործերի վարիչ եւ տալով նորան մի գաւառ։

132 Թ. Ուռհայում Սայիդ ի. Հիշամ եւ նորա հօրեղբօրորդին այլ բանտարկեալների հետ հանդերձ ազատեցին բանդապետին եւ դուրս եկան բանդից։ Խառանի բնակիչք խուռն բազմութեամբ կոտորեցին նոցա, ի թիւս որոց եւս Զորրորդ Հայոց իշխան Կուշանին։

132 Թ. Աբու-լ-Աբբաս (ամիրապետը) դրեց իւր եղբայր Աբու Ջաֆարին Միջագետքի, Հայաստանի եւ Արարատեանի վերայ կառավարիչ։

Նոյն Թ. (Աբու-լ-Աբբաս) Սաֆֆահ ուղարկեց իւր Եղբայր Մանսուրին կառավարչի պաշտօնով Միջագետք, Արարատեան եւ Հայաստան։ Կառավարչի օգնականն էր Աբու Ջաֆար ի. Մուհամեդ ի. Ալի։

133 Թ. յունուց կայսր Կոստանդին արշաւեց Բալի-Բալա (Կարին) եւ բանակեցաւ Խիտա գաշտում, առաջ ուղարկելով Կուշան Հային, որ պաշարեց քաղաքը։ Բնակիչներից երկու Հայ եղբայրներ պեղեցին պարսպի աւերակ տեղը. Կուշան իւրայիններով ներս մտաւ, տիրեց քաղաքին եւ ոչնչեց այրերին, իսկ կանանց գերեց։

134 Թ. Հայաստանի կառավարիչն էր Եզիդ ի. Ուսայդ։

145 Թ. Թուրքերը եւ Խազարները արշաւեցին Բաբ-էլ-աբուաբից եւ կոտորեցին մուսլիմներից մեծ բազմութիւն Հայաստանում։

147 Թ. Աստարխան Խարազմը Թուրքաց դրոհակներով յարձակեցաւ մուսլիմների վերայ Հայաստանում, գերեց մուսլիմներից եւ քրիստոնեաներից մեծ բազմութիւն եւ մտաւ Տփղիս։ Մանսուր ուղարկեց թուրքերի հետ պատերազմելու Ջաբրայիլ ի. Եահեա'ին եւ Հարբ ի. Աբդուլլահին, որոնք ճակատեցան թշնամու հետ, սակայն Ջա-